



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԹՎԻ ԱՌԵՎԱԶՆ ՄԵԿ
ՀԻՆԳԵՐՈՐԴԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԴԱՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔԻ 145-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ
ՄԱՍԻ 2-ՐԴ ԿԵՏԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

ք. Երևան

17 հունվարի 2024 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող),
Վ. Գրիգորյանի, Հ. Թովմասյանի, Ե. Խունդկարյանի, Հ. Հովակիմյանի, Է. Շաթիրյանի,
Ս. Սաֆարյանի, Ա. Վաղարշյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

դիմողի՝ Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ
հինգերորդի ներկայացուցիչ Ա. Վարդևանյանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված Ազգային ժողովի ներկա-
յացուցիչ՝ Ազգային ժողովի աշխատակազմի իրավական ապահովման և սպասարկման
բաժնի պետ Մ. Ստեփանյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետի, 169-րդ հոդվածի 1-ին
մասի 2-րդ կետի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանա-
դրական օրենքի 22 և 68-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «ՀՀ Ազգային ժողովի պատգա-
մավորների ընդհանուր թվի առնվազն մեկ հինգերորդի դիմումի հիման վրա՝ «Հայաս-
տանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 145-րդ
հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը
որոշելու վերաբերյալ» գործը:

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքը (այսուհետ նաև՝ Դատական օրենսգիրք) Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2018 թվականի փետրվարի 7-ին, Հանրապետության նախագահի կողմից ստորագրվել՝ 2018 թվականի փետրվարի 10-ին և ուժի մեջ է մտել 2018 թվականի ապրիլի 9-ին:

Դատական օրենսգրքի՝ **«Դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու իրավասություն ունեցող մարմինները»** վերտառությամբ 145-րդ հոդվածի 1-ին մասով սահմանվում է.

«1. Դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու իրավասություն ունեն՝

1) էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովը.

2) Լիազոր մարմինը.

3) Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը՝ սույն հոդվածի 1.1-ին կետով նախատեսված դեպքերում»:

Դատական օրենսգրքի վերոնշյալ հոդվածը լրացվել է ««Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-197-Ն օրենքով (ընդունվել է 2020 թվականի մարտի 25-ին, ուժի մեջ է մտել 2020 թվականի մայիսի 2-ին), որով վիճարկվող հոդվածի 1-ին մասը լրացվել է 3-րդ կետով՝ հետևյալ ձևակերպմամբ.

«3) Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը՝ սույն հոդվածի 1.1-ին կետով նախատեսված դեպքերում»:

Գործի քննության առիթը ՀՀ Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ հինգերորդի (այսուհետ նաև՝ Դիմող)՝ 2022 թվականի փետրվարի 15-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Սահմանադրական դատարանը 2022 թվականի նոյեմբերի 8-ի ՍԴԱՌ-177 աշխատակարգային որոշմամբ կասեցրել է նշված գործի վարույթը՝ լրացուցիչ նյութեր հետազոտելու և տեղեկություններ ստանալու անհրաժեշտությամբ պայմանավորված:

2022 թվականի դեկտեմբերի 10-ին Սահմանադրական դատարանի՝ սույն գործով զեկուցող դատավորի լիազորությունները դադարել են, և Սահմանադրական դատարանի 2023 թվականի հունվարի 10-ի ՍԴԱՌ-2 աշխատակարգային որոշմամբ սույն գործով նոր զեկուցող դատավոր է նշանակվել:

Սահմանադրական դատարանի 2024 թվականի հունվարի 9-ի ՍԴԱՌ-7 աշխատակարգային որոշմամբ սույն գործի վարույթը վերսկսվել է, և գործի դատաքննությունը նշանակվել է 2024 թվականի հունվարի 16-ին:

Ուսումնասիրելով դիմումը, պատասխանողի գրավոր բացատրությունը, գործում առկա մյուս փաստաթղթերը և վերլուծելով Դատական օրենսգրքի վիճարկվող իրավադրույթն ու դրա հետ փոխկապակցված օրենսդրական այլ դրույթներ՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Ձ Ե Ց**.

1. Դիմողի դիրքորոշումները

Դիմողը գտնում է, որ Դատական օրենսգրքով Արդարադատության նախարարի՝ որպես գործադիր իշխանության ներկայացուցչի կողմից դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելը չի համապատասխանում իշխանությունների բաժանման ու հավասարակշռման սկզբունքին և հակասում է Սահմանադրության 164-րդ հոդվածի պահանջներին:

Դիմողը պնդում է. «(...) նշված գործիքակազմը լայնորեն իրացվում է Արդարադատության նախարարի կողմից, որը եթե հանդիսանար դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու միակ գործիքակազմը կարող էր ունենալ իրավաչափ հետապնդվող նպատակ, սակայն հենց սույն Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք սահմանադրական օրենքի 145-րդ հոդվածի 1-ին մասը որևէ կերպ չի դիտարկում Արդարադատության նախարարությանը որպես միակ կարգապահական վարույթ հարուցող սուբյեկտ»:

Սույն համատեքստում Դիմողն ընդգծում է էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի դերը և նշում, որ պատահական չէ, որ այն բաղկացած չէ բացառապես դատավորներից, այլ նաև ոչ դատավոր անդամներից, ինչը հենց պետք է երաշխավորեր Արդարադատության նախարարության՝ որպես կարգապահական վարույթ հարուցող սուբյեկտի կառուցակարգի վերացումը:

Դիմողը հայտնում է, որ 2019-2021 թվականներին Արդարադատության նախարարի կողմից հարուցված կարգապահական վարույթների թիվը հիմնավորում է սահմանադրականության խնդիրները վիճարկվող նորմի և դրա փաստացի գործադիր

իշխանություն-դատական ​​իշխանություն բաժանման ու հավասարակշռման անհամապատասխանությունը՝ ստեղծված իրավիճակը դիտելով որպես սահմանադրականության խնդիր Սահմանադրության 1-ին հոդվածի՝ «իրավական պետություն» նորմ-սկզբունքի հետ:

Վկայակոչելով Սահմանադրական դատարանի 2021 թվականի հոկտեմբերի 12-ի ՍԴՈ-1613 որոշմամբ Սահմանադրության 164-րդ հոդվածի 1-ի մասի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը՝ Դիմողը նշում է, որ կարգապահական վարույթ հարուցելու մասին դիմումներ/հաղորդումներ ներկայացնելու, կարգապահական վարույթ հարուցելու իրավասություն ունեցող սուբյեկտների որոշման հարցն օրենսդրի լայն հայեցողության շրջանակում է, որի սահմաններն ուրվագծվում են ինչպես Սահմանադրությամբ ամրագրված վերաբերելի հիմնարար սկզբունքներով, այնպես էլ դրանց բովանդակության բացահայտմանն ուղղված Սահմանադրական դատարանի դիրքորոշումներով: Ըստ այդմ՝ Դիմողը հանգում է հետևության, որ օրենսդիրը, ունենալով կարգապահական վարույթ հարուցելու իրավասություն ունեցող սուբյեկտների որոշման լայն հայեցողություն, այն որևէ դեպքում չի կարող վերածել Սահմանադրության 1-ին, 4 և 164-րդ հոդվածներով նախատեսված սահմանադրական երաշխիքների խաթարման:

Դիմողի կարծիքով՝ միջազգային իրավական զարգացումներին համընթաց՝ պետք է իրականացվի նաև նշված հարցի վերաբերյալ օրենսդրական քաղաքականություն: Մինչդեռ, չնայած Եվրոպայի խորհրդի Կոռուպցիայի դեմ պայքարի պետությունների խմբի (այսուհետ նաև՝ ԳՐԵԿՈ) ներկայացրած ունիվերսալ բնույթ ունեցող առաջարկներին, որևէ գործողություն չի իրականացվում նշված հարցի վերաբերյալ, իսկ նշված խնդիրն օրենսդրի տիրույթում հաղթահարման ենթակա չէ, իսկ կարգապահական վարույթների թիվն ինքնին պարզ է դարձնում, որ այն գործադիր իշխանության կողմից ոչ թե իրականացվում է որպես բացառիկ միջոց կամ բացառություն ընդհանուր կանոնից, այլ որպես լայնորեն իրացման ենթակա գործիքակազմ, ինչը պետք է գնահատվի Սահմանադրական դատարանի կողմից՝ պնդելով որ Սահմանադրական դատարանի կողմից սույն հարցի սահմանադրականության գնահատման տեսանկյունից երբևէ քննության առարկա չեն դարձել դիմումում ներկայացված միջազգային հեղինակավոր կազմակերպությունների մոտեցումներն ու առաջարկները:

Դիմողը նշում է, որ թեև Սահմանադրության 175-րդ հոդվածի ուժով դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի լուծման բացառիկ լիազորությունը պատկանում է Բարձրագույն դատական խորհրդին, կարգապահական վարույթի հարուցման և դատավորին կարգապահական «հետապնդման» ենթարկելու գործիքակազմը վիճարկվող կարգավորման ուժով պատկանում է գործադիր իշխանությանը: Այլ կերպ ասած՝ ըստ Դիմողի՝ գործադիր իշխանությունը, պայմանավորված օբյեկտիվ կամ սուբյեկտիվ պատճառներով, ունենալով անհամաձայնություն ցանկացած դատավորի կամ նրա կայացրած որոշման հետ, կարող է դատավորին ենթարկել կարգապահական «հետապնդման»:

Դիմողի կարծիքով՝ նման գործիքակազմն առաջացնում է Սահմանադրության 4-րդ հոդվածով երաշխավորված՝ իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքին հակասող իրավիճակ:

Դիմողի դիտարկմամբ՝ խնդրահարույց է Դատական օրենսգրքի 146-րդ հոդվածով նախատեսված՝ կարգապահական վարույթ հարուցելու առիթներից վարույթ հարուցող մարմնի կողմից իր լիազորություններն իրականացնելիս առերևույթ կարգապահական խախտման հատկանիշներ պարունակող արարքի ինքնուրույն հայտնաբերումը:

Մասնավորապես, Դիմողի դիտարկմամբ՝ «(...) սույն վեճի շրջանակներում առաջանալու է անհրաժեշտություն նաև համակարգային առումով փոխկապակցվածության մասով գնահատել Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրք սահմանադրական օրենքի 146-րդ հոդվածի կարգապահական վարույթ հարուցելու առիթներին, մասնավորապես այն, որ «վարույթ հարուցող մարմնի կողմից իր լիազորություններն իրականացնելիս առերևույթ կարգապահական խախտման հատկանիշներ պարունակող արարքի ինքնուրույն հայտնաբերումը»»:

Դիմողի կարծիքով՝ վիճարկվող նորմով նախատեսված՝ Արդարադատության նախարարի լիազորությունը հանգեցնում է պետական իշխանության երկու անկախ և առանձին ճյուղերի՝ գործադիր և դատական իշխանությունների լիազորությունների սահմանադրական հավասարակշռման խաթարման, և սույն սահմանադրական վեճի լուծումն առանցքային նշանակություն կունենա նաև սահմանադրական մշակույթի և հանրային իշխանական կյանքում սահմանադրաիրավական արժեհամակարգի ձևավորման և երաշխավորման տեսանկյունից:

Ամփոփելով՝ Դիմողը խնդրում է որոշել Դատական օրենսգրքի 145-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի՝ Սահմանադրության 1-ին, 4 և 164-րդ հոդվածներին համապատասխանության հարցը:

2. Պատասխանողի դիրքորոշումները

Ազգային ժողովը (այսուհետ՝ Պատասխանող) իր դիրքորոշումներում անհամաձայնություն է հայտնում Դիմողի այն փաստարկին, որ գործադիր իշխանությունը, օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով անհամաձայնություն ունենալով ցանկացած դատավորի կողմից կայացված որոշման հետ, իր վերաբերմունքը կարող է դրսևորել՝ դատավորին կարգապահական հետապնդման ենթարկելով: Պատասխանողը վկայակոչում է, որ Դատական օրենսգրքի նշված օրենսդրական կարգավորմամբ սահմանված են դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու առիթները և հիմքերը, ինչպես նաև կարգապահական վարույթ հարուցող մարմնի վրա է դրված դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքի առկայության ապացուցման պարտականությունը, ինչը չարաշահումներից զերծ մնալու երաշխիք է:

Պատասխանողը վկայակոչում է Եվրոպայի դատավորների խորհրդակցական խորհրդի, Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպության Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակի Արևելյան Եվրոպայում, Հարավային Կովկասում և Կենտրոնական Ասիայում դատական անկախության վերաբերյալ Կիևյան հանձնարարականների (այսուհետ նաև՝ Կիևյան հանձնարարականներ), Եվրոպայի խորհրդի «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Վենետիկի հանձնաժողով) դիրքորոշումները՝ ընդունելով, որ պահպանվել է այն կանոնը, որ դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու գործընթացում ներգրավված անձը չի կարող մասնակցել կարգապահական պատասխանատվության որոշման գործընթացին և, մասնավորեցնելով այն Դատական օրենսգրքի 145-րդ հոդվածով սահմանված սուբյեկտների գործառույթների նկատմամբ, գտնում է, որ դրանք տարանջատված են:

Պատասխանողը գտնում է նաև, որ նշված իրավակարգավորումներով պայմանավորված՝ Արդարադատության նախարարի՝ դատավորի նկատմամբ կարգապահական

վարույթ հարուցելու լիազորությունը որևէ կերպ չի կարող մեկնաբանվել որպես գործադիր իշխանություն-դատական իշխանություն բաժանման ու հավասարակշռման սահմանադրական անհամապատասխանություն, քանի որ Արդարադատության նախարարը նախաձեռնում է կարգապահական վարույթ, իսկ վերջնական որոշում կայացնելու լիազորությամբ օժտված է միայն Բարձրագույն դատական խորհուրդը: Այսինքն՝ թեև կարգապահական վարույթ հարուցելու լիազորությունը վերապահված է Արդարադատության նախարարին, այնուամենայնիվ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու իրավասությամբ օժտված է միայն Բարձրագույն դատական խորհուրդը:

Պատասխանողը վկայակոչում է «Սաղաթելյանն ընդդեմ Հայաստանի» գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ նաև՝ ՄԻԵԴ) վճիռը, որում արձանագրվել են այն դեպքերը, երբ դատարաններից տարբերվող մարմիններ են լուծում այնպիսի վեճեր, որոնց նկատմամբ կիրառելի է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ նաև՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածը: Մասնավորապես, ըստ Պատասխանողի՝ նշյալ որոշման մեջ ՄԻԵԴ-ը նշել է, որ որոշելու համար, թե արդյոք դատարանը Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ի մասի իմաստով կարող է համարվել անկախ, պետք է հաշվի առնել, ի թիվս այլոց, դրա անդամների նշանակման կարգը և նրանց պաշտոնավարման ժամկետը, արտաքին ճնշումների դեմ երաշխիքների առկայությունը և այն հարցը՝ արդյո՞ք այդ մարմինն ընկալվում է որպես անկախ:

Պատասխանողը վկայակոչել է նաև Սահմանադրական դատարանի 2019 թվականի նոյեմբերի 15-ի ՍԴՈ-1488 որոշմամբ արտահայտած դիրքորոշումները, համաձայն որոնց՝ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ գործերով Բարձրագույն դատական խորհրդի՝ որպես դատարան հանդես գալու դեպքերում Սահմանադրությամբ և այլ օրենքներով նախատեսված են դատարաններին բնորոշ այնպիսի դատավարական երաշխիքներ, ինչպիսիք են ողջամիտ ժամկետում գործի քննությունը, օրենքի և դատարանի առաջ հավասարությունը, դատական վարույթի հրապարակայնությունը, դատական ակտերի պարտադիրությունը, որոնք իրենց ամբողջության մեջ գնահատվել են որպես Սահմանադրության 61

և 63-րդ հոդվածներով նախատեսված իրավունքների իրացման ապահովմանն ուղղված միջոցներ:

Ամփոփելով իր դիրքորոշումները՝ Պատասխանողը խնդրում է Դատական օրենսգրքի 145-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը ճանաչել Սահմանադրությանը համապատասխանող:

3. Գործի շրջանակներում պարզման ենթակա հանգամանքները

Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում սույն գործով վիճարկվող նորմի սահմանադրականությունը գնահատել հետևյալ հարցադրումների շրջանակում.

3.1. արդյո՞ք Դատական օրենսգրքի վիճարկվող իրավադրույթով Արդարադատության նախարարի՝ դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու լիազորությունը համապատասխանում է Սահմանադրության 4-րդ հոդվածով երաշխավորված՝ իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքին.

3.2. արդյո՞ք Արդարադատության նախարարի կողմից դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու լիազորությունը սահմանափակում է դատավորի անկախությունը.

3.3. արդյո՞ք Արդարադատության նախարարի կողմից դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելը համատեղելի է դատավորի նկատմամբ կարգապահական վարույթում Սահմանադրության 63-րդ հոդվածով նախատեսված արդար դատաքննության իրավունքի երաշխիքների հետ:

4. Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները

4.1. Սահմանադրության 4-րդ հոդվածի համաձայն՝ պետական իշխանությունն իրականացվում է Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան՝ օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների բաժանման ու հավասարակշռման հիման վրա:

Նշյալ սահմանադրական սկզբունքը ներառում է երկու բաղադրատարր՝ իշխանությունների բաժանում և իշխանությունների հավասարակշռում, որոնք սահմանադրական ժողովրդավարության, մարդու հիմնական իրավունքների և ազատությունների

պաշտպանության և իրավունքի գերակայության ապահովման սահմանադրական պայման և երաշխիք են: Այն ապահովում է միասնական պետական իշխանության երեք ճյուղերի գործառուֆային բաժանման միջոցով պետական իշխանական լիազորությունների անվերահսկելիության բացառումը, որով և սահմանադրական ժողովրդավարությունում իշխանության կենտրոնացումը և մեկ մարմնի կամ համակարգի վերահսկողությունը կանխելու նպատակը ժողովրդավարության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության և իրավունքի գերակայությունն ապահովելու համար անհրաժեշտ պայմաններ ստեղծելն է:

Սահմանադրական դատարանը նախկինում ևս անդրադարձել է իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքի սահմանադրաիրավական բովանդակությանը: Ի մասնավորի՝ 2008 թվականի հոկտեմբերի 14-ի ՍԴՈ-766 որոշմամբ Սահմանադրական դատարանը սահմանել է. «(...) պետական իշխանությունը հանդես է գալիս որպես պետականորեն կազմակերպված ժողովրդի հանրային իշխանության ձև, որն իրականացվում է Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան՝ օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների բաժանման և հավասարակշռման հիման վրա: Այդ բաժանումն իրականացվում է իշխանության գործառնական բնույթից ելնելով, որին համապատասխան ձևավորվում են անհրաժեշտ կառուցակարգեր՝ համապատասխան մարմիններ, որոնք սահմանադրորեն օժտվում են համարժեք լիազորություններով և իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով»:

Իր մեկ այլ՝ 2021 թվականի փետրվարի 23-ի ՍԴՈ-1578 որոշման մեջ Սահմանադրական դատարանը նշել է. «Իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքը, ձևակերպված լինելով Սահմանադրության 4-րդ հոդվածում, ժողովրդավարության և մարդու իրավունքների պաշտպանության համար անհրաժեշտ պայման լինելուց բացի, կոչված է նաև ապահովելու անհրաժեշտ միջավայր Սահմանադրության 1-ին հոդվածով հռչակված՝ Հայաստանի Հանրապետության իրավական պետության որակի համար՝ հանդիսանալով իրավական պետության մյուս հատկանիշների, մասնավորապես՝ հանրային իշխանության մարմինների գործունեության օրինակաչության, իրավական որոշակիության, իշխանության չարաշահման կամ կամայա-

կանությունների արդյունավետ արգելքի, օրենքի առջև հավասարության, խտրականության արգելքի, արդարադատության մատչելիության և արդար դատաքննության իրավունքի ապահովման կարևոր երաշխիքներից մեկը:

Իշխանությունների բաժանման և հավասարակշռման մասին Սահմանադրության 4-րդ հոդվածով նախատեսված սկզբունքի պահանջն է պետական իշխանության գործառույթային (օրենսդիր, դատական և գործադիր) և այդ գործառույթների իրագործմանը կոչված ինստիտուտների (պետական մարմինների և պաշտոնատար անձանց) հստակ տարանջատվածությունը: Իշխանությունների բաժանումը, սակայն, ինքնանպատակ չէ, քանի որ իշխանության իրականացման ընթացքում պետության կենսական կարևոր խնդիրների իրագործման նպատակով այն անհրաժեշտաբար պետք է զուգորդվի իշխանությունների հավասարակշռմամբ: Այսինքն՝ հստակ տարանջատվածության հետ մեկտեղ պետական իշխանության ճյուղերը անհրաժեշտաբար պետք է գտնվեն ընդհանուր հավասարակշռության մեջ»:

2021 թվականի ապրիլի 29-ի ՍԴԴ-1590 որոշման մեջ Սահմանադրական դատարանն արձանագրել է. «(...) Իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքը ժողովրդավարության, իրավունքի գերակայության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության հիմնարար երաշխիք է, որը թույլ է տալիս կյանքի կոչել Սահմանադրության 1-ին հոդվածում ամրագրված Հայաստանի Հանրապետության՝ ժողովրդավարական և իրավական պետություն հանդիսանալու սահմանադրի հրամայականը»:

Գործադիր իշխանության ներգրավվածությունը դատավորների սահմանադրաչափ գործունեության ապահովման նպատակով քաղաքականության մշակմանն ու իրականացմանը բխում է դատավորի անկախության և անաչառության վերաբերյալ Սահմանադրության 164-րդ հոդվածի 1-ին մասից, որպես դատական իշխանության առանցքային կառուցակարգ, և դատարանի անկախության և անաչառության մասին Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասից, որպես արդար դատաքննության բաղադրիչ: Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասով և 164-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված վերոհիշյալ սահմանադրական հրամայականները հանրային իշխանությանը ծանրաբեռնում են դրանց ապահովմանն ուղղված՝ օրենսդրի կողմից նշված հիմքերով և ընթացակարգով միջոցներ ձեռնարկելու լիազորությամբ, որը, ի

թիվս կարգապահական վարույթ հարուցելու իրավասություն ունեցող այլ մարմինների, իրականացվում է նաև Արդարադատության նախարարի կողմից: Հետևաբար՝ Արդարադատության նախարարությանն առաջադրված վերոնշյալ խնդրի իրականացումը ենթադրում է համարժեք լիազորությունների առկայություն, որն ուղղված է վերը նշված նպատակի իրականացմանը:

Միաժամանակ, Արդարադատության նախարարի կողմից ներկայացված՝ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ միջնորդությունը դատավորի նկատմամբ միջամտող ակտ չէ, որը դատավորի նկատմամբ իրավական հետևանք է առաջացնում, այլ ընդամենը նախաձեռնում է նման միջամտող ակտ կայացնելու իրավասություն ունեցող միակ իրավասու ատյանի՝ Բարձրագույն դատական խորհրդի առջև դատավորի կարգապահական գործով վեճի լուծման հնարավորություն: Վերոնշյալի հիման վրա Սահմանադրական դատարանը գտնում է, որ Արդարադատության նախարարի՝ որպես վարույթ հարուցող լիազոր մարմնի մասնակցությունը դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վարույթին, իբրև այդպիսին, չի հակասում օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների բաժանման սահմանադրական սկզբունքին:

4.2. Սահմանադրության 164-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ արդարադատություն իրականացնելիս դատավորն անկախ է, անաչառ և գործում է միայն Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան:

Սահմանադրական դատարանն իր որոշումներում անդրադարձել է դատավորի անկախությանն ու վերջինիս իրավական երաշխիքներին:

Մասնավորապես, 2006 թվականի սեպտեմբերի 20-ի ՍԴՈ-647 որոշման մեջ Սահմանադրական դատարանն արձանագրել է. «(...) Սահմանադրությամբ և օրենքներով անհրաժեշտ սահմանադրաիրավական երաշխիքներ պետք է ստեղծվեն դատարանների անկախության ապահովման համար: Իր հերթին, դատարանների անկախությունը վերացական հասկացություն չէ: Այն ենթադրում է գործառնական, կառուցակարգային, նյութական ու սոցիալական անկախության այնպիսի նախադրյալներ, որոնք անհրաժեշտ ու բավարար են դատարանների ու ողջ դատական իշխանության անկախությունը երաշխավորելու համար»:

2019 թվականի հունիսի 18-ի ՍԴՈ-1463 որոշման մեջ Սահմանադրական դատարանն արտահայտել է հետևյալ դիրքորոշումը. «(․․) Սահմանադրության 1-ին և 4-րդ հոդվածների համակարգային վերլուծությունից հետևում է, որ Հայաստանի Հանրապետությունն իրավական պետություն է, որում, որպես սահմանադրական կարգի հիմնական սկզբունք, երաշխավորված է պետական, այդ թվում՝ դատական իշխանության իրականացումը՝ Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան, ինչը դատարանների անկախությունը երաշխավորող և սահմանադրական նախապայման է: Համակցված Սահմանադրության 164-րդ հոդվածի 1-ին մասի հետ՝ այն առաջնահերթ ենթադրում է դատական իշխանությունը (արդարադատությունը) իրականացնող դատավորների գործառական, կառուցակարգային, նյութական և սոցիալական անկախության նորմատիվ այնպիսի կարգավորումների առկայություն, որոնք անհրաժեշտ և բավարար են արդարադատության իրականացման համար»:

Սույն որոշման 4.1-ին ենթակետում նշված դիրքորոշումների համատեքստում զարգացնելով վերոնշյալ որոշումներում արտահայտած դիրքորոշումները՝ Սահմանադրական դատարանն ընդգծում է, որ դատական, օրենսդիր և գործադիր իշխանության ճյուղերի բաժանման սահմանադրական սկզբունքի ապահովման նպատակը սահմանադրական ժողովրդավարությունում պետական իշխանության ճյուղերից յուրաքանչյուրի սահմանադրական խնդիրների իրականացման ուղղությամբ նրա գործունեության արդյունավետության երաշխավորումն է, որը դատական իշխանությանը վերաբերելի մասով՝ արդարադատության իրականացումն է:

Սահմանադրության 173-րդ հոդվածում ամրագրված է Բարձրագույն դատական խորհրդի կարգավիճակը, այն է՝ վերջինս դատարանների և դատավորների անկախությունը երաշխավորող անկախ պետական մարմին է: Վերոգրյալից բխում է, որ դատավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու՝ Բարձրագույն դատական խորհրդի՝ Սահմանադրության 175-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով սահմանված գործառույթը Սահմանադրի կողմից վստահվել է այս ատյանին՝ դատավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու իրավասության ողջ շրջանակը զերծ պահելով հանրային իշխանության որևէ մարմնի կամ պաշտոնատար անձի միջամտող ազդեցությունից՝ այն վերապահելով միայն այնպիսի ատյանի

իրավասությանը, որի սահմանադրական առաքելությունը և գործունեության հիմնական նպատակը հենց դատարանների և դատավորների անկախության երաշխավորումն է:

Սահմանադրական դատարանը, ուսումնասիրելով Դատական օրենսգրքով նախատեսված կարգապահական վարույթի հարուցման կառուցակարգի վերաբերյալ իրավակարգավորումները, հարկ է համարում ընդգծել, որ Արդարադատության նախարարի և Դատական օրենսգրքով նախատեսված մյուս սուբյեկտների լիազորությունները սահմանափակված են դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու հարցի լուծմամբ, որից հետո նշված սուբյեկտները կարգապահական հարցերով միջամտող և վերջնական որոշում կայացնելու լիազորություն չունեն:

Արդարադատության նախարարի՝ դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու լիազորության սահմանադրականությունը քննարկելիս այս գործոնն իրենց խորհրդատվական փաստաթղթերում կարևորել են նաև Վենետիկի հանձնաժողովը¹, Միավորված ազգերի կազմակերպությունը (այսուհետ՝ նաև ՄԱԿ)², Դատավորների միջազգային միությունը³, Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպության ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակը (այսուհետ՝ նաև ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ)⁴ և Եվրոպայի դատավորների խորհրդատվական խորհուրդը⁵:

Վերոնշյալի համատեքստում Սահմանադրական դատարանը հարկ է համարում անդրադառնալ կարգապահական վարույթի հարուցման ինստիտուտի՝ գործող օրենսդրությամբ նախատեսված կառուցակարգերին:

¹ Տե՛ս 2017թ. «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի վերաբերյալ CDL-AD(2017)019 կարծիքը, Դատարանների և դատավորների վերաբերյալ Վենետիկի հանձնաժողովի կարծիքների և զեկույցների թիվ CDL-PL(2019)008 ժողովածուն:

² Տե՛ս ՄԱԿ-ի 06.09.1985թ. Հանցավորության կանխման և հանցանք կատարած անձանց նկատմամբ վերաբերմունքի 7-րդ համաժողովի կողմից ընդունված՝ դատավորների անկախության հիմնական սկզբունքները:

³ Տե՛ս Դատավորների միջազգային միության կողմից 17.11.1999թ. ընդունված դատական համընդհանուր խարտիայի 7.1-ին հոդվածը:

⁴ Տե՛ս ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի Արևելյան Եվրոպայում, Հարավային Կովկասում և Կենտրոնական Ասիայում դատական անկախության 2010թ. ընդունված Կիևյան հանձնարարականների 26-րդ կետը:

⁵ Տե՛ս Եվրոպայի դատավորների խորհրդատվական խորհրդի 2002թ. ընդունված թիվ 3 կարծիքը:

Դատական օրենսգրքի 145-րդ հոդվածը սահմանում է դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու իրավասություն ունեցող մարմինների շրջանակը, որի 1-ին մասի համաձայն՝ դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու իրավասություն ունեն՝

«1) Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովը.

2) Լիազոր մարմինը.

3) Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը՝ սույն հոդվածի 1.1-ին կետով նախատեսված դեպքերում»:

Այսպիսով, կարգապահական վարույթ հարուցելու իրավասություն ունեցող սուբյեկտների բազմաթվությունը չեզոքացնում է մտավախությունն առ այն, որ սույն իրավասությունը կարող է կենտրոնացվել գործադիր իշխանության ձեռքում:

Այս համատեքստում Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը հանդես է գալիս որպես կարգապահական վարույթ հարուցող մասնագիտացված մարմին և լիազորված է մշտադիտարկում իրականացնելու միայն դատավորների գույքային դրության նկատմամբ՝ բացահայտելու ապօրինի հարստացման հնարավոր ռիսկերը, ինչպես նաև հայտարարագիրը դիտավորությամբ չներկայացնելու, հայտարարագրման ենթակա տվյալ(ներ)ը թաքցնելու և/կամ հայտարարագրում կեղծ տվյալ(ներ) ներկայացնելու, հայտարարագրմանն առնչվող ձևական (հայտարարագրի լրացման /հանձման կարգ/ պահանջներ) և բովանդակային (հայտարարագրում անզգուշությամբ սխալ և/կամ ոչ ամբողջական տվյալ(ներ) ներկայացնելը) խախտումների հայտնաբերման դեպքերում և այդ հիմքով դատավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու միջնորդությամբ դիմելու Բարձրագույն դատական խորհրդին (Դատական օրենսգրքի 69-րդ հոդվածի 1-ին մասի 15 և 16-րդ կետեր):

Իր հերթին, Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովը դատավորների ինքնակառավարման մարմին՝ Ընդհանուր ժողովի կողմից ձևավորվող հանձնաժողովներից մեկն է, որը կազմված է վեց դատավոր անդամներից և երկու դատավոր չհանդիսացող անդամներից (Դատական օրենսգրքի 77-րդ հոդվածի 4-րդ մաս), որոնց ներկայացնում են համապատասխան հասարակական կազմակերպությունները (Դատական օրենսգրքի 77-րդ հոդվածի 9-րդ մաս): Հետևաբար՝ նշյալ

մարմնում գերազանցապես ներկայացված են դատավորները, իսկ հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներն իրականացնում են առավելապես հասարակական դիտարկման (watchdog) գործառույթ, որի նպատակն է նվազեցնել դատավորների համայնքում կորպորատիվիզմի և կարգավիճակի ընդհանրությամբ պայմանավորված հատվածական շահերի հնարավոր գերակայությունը:

Նշյալի հետ համակցված՝ Արդարադատության նախարարը՝ որպես կարգապահական վարույթ հարուցող լիազոր մարմին, կարող է ապահովել դատավորների կարգապահական հարցերով գերակշռաբար դատավոր անդամներից բաղկացած՝ Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի կողմից հնարավոր համայնքային համերաշխությունից ազդվող որոշումների շրջանցումը՝ դատավորների դեմ կարգապահական բողոքներ պարունակող հաղորդում ներկայացնող անձանց համար կարգապահական արդարադատության մատչելիության երաշխավորման համար: Չունենալով դատավորների հետ համակարգային և կորպորատիվ շահերով պայմանավորված փոխկապվածություն կամ իր որոշումների վրա ազդող այլ ինստիտուցիոնալ գործոններ՝ Արդարադատության նախարարը կարող է հանդես գալ որպես Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի գործունեությունը լրացնող ինստիտուցիոնալ սուբյեկտ: Հետևաբար՝ Արդարադատության նախարարի՝ վիճարկվող նորմով նախատեսված լիազորությունն արդյունավետորեն կարող է լրացնել դատավորների կարգապահական վարույթների հարուցման համակարգը՝ բացահայտելով դատավորների առերևույթ ոչ իրավաչափ վարքագծի՝ կարգապահական պատասխանատվության խնդիր պարունակող հնարավոր դեպքերը:

Սահմանադրական դատարանը դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու և իրականացնելու ընթացակարգի՝ օրինականության, արդարության և արդյունավետության չափանիշներին համապատասխանությունը կարևորում է ոչ միայն դատավորների անկախության և պաշտպանվածության, այլև արդարադատություն հայցող ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունքների առումով: Այսպես՝ կարգապահական վարույթներով դատավորների կողմից թույլ տրված խախտումների արձանագրումն ու դատավորների նկատմամբ կարգապահական պատասխանատվության միջոցի կիրառումը ճյուղային դատավարական օրենսդրությամբ

նախատեսված հիմքերով և կարգով հանդիսանում է նոր հանգամանք գործը դատավարական կարգով նորոգելու համար, ինչը նշանակում է նախկինում տեղ գտած իրավունքների խախտումների վերացման և իրավունքների վերականգնման արդյունավետ կառուցակարգի առկայություն:

Ընդ որում, հատկանշական է, որ Սահմանադրական դատարանը 2021 թվականի հոկտեմբերի 12-ի ՍԴՈ-1613 որոշմամբ Սահմանադրությանը հակասող է ճանաչել Դատական օրենսգրքում և հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքները՝ այդ թվում այնքանով, որքանով սահմանադրական իմաստով խնդրահարույց էր համարել դատավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցով քաղաքացիներին Բարձրագույն դատական խորհուրդ դիմելու ուղղակի իրավունք վերապահելը, մասնավորապես, խնդրահարույց համարելով դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու և կարգապահական պատասխանատվության ենթարկելու իրավասություն ունեցող մարմինների մեկտեղման մոտեցումը և Սահմանադրության տեսանկյունից առավել ընդունելի համարելով դիմողների կողմից ստացվող բողոքների ինստիտուցիոնալ գտումը և դրանից հետո միայն պետական իշխանության **տարբեր թևեր** ներկայացնող մարմինների կողմից կարգապահական վարույթների հարուցումը՝ այնուհետև վերջիններս քննության ուղարկելով Բարձրագույն դատական խորհուրդ:

Անդրադառնալով Դիմողի այն պատճառաբանությանը, թե գործադիր իշխանությունը, օբյեկտիվ կամ սուբյեկտիվ պատճառներով ունենալով անհամաձայնություն ցանկացած ատյանի դատարանի կայացրած որոշման հետ, կարող է դրան արձագանքել՝ դատավորին կարգապահական «հետապնդման» ենթարկելով, ապա Սահմանադրական դատարանի գնահատմամբ՝ կարգապահական վարույթներում արդար դատաքննության երաշխիքների առկայությունը և արդար դատաքննության կառուցակարգերի շարունակական պատշաճ իրացումը չեզոքացնում են նման նպատակային միջնորդություններ ներկայացնելու հաջողության հեռանկարի վտանգը:

Ավելին, Սահմանադրական դատարանը գտնում է, որ դատավորների նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու սահմանադրաիրավական նշանակությունն ու հետևանքները հաշվի առնելով՝ պետք է բացառվեն կարգապահական վարույթ հարուցող մարմինների և կարգապահական պատասխանատվության հարցի վերաբերյալ

վերջնական որոշում կայացնելու իրավասություն ունեցող մարմնի միջև այնպիսի փոխհարաբերությունները, որոնք անկողմնակալ դիտորդի մոտ կարող են ողջամիտ կասկած հարուցել տվյալ կարգապահական վարույթով նրանց անաչառության նկատմամբ կամ որևէ կերպ գնահատվել իբրև դատավորի և, առհասարակ, դատական իշխանության նկատմամբ ներգործության միջոց: Կարգապահական վարույթի ողջ գործընթացի սահմանադրականությունը, ի թիվս այլ երաշխիքների, պայմանավորված է նաև նրանով, որ բացառում է անկողմնակալ դիտորդի ողջամիտ կասկածն առ այն, որ գործընթացն իրականացվում է օրինականության, դատարանի գործունեությանը չմիջամտելու, դատավորի և դատարանի անկախությունը հարգելու, և ըստ այդմ՝ իշխանությունների բաժանման և հավասարակշռման սահմանադրական սկզբունքների նախատեսմամբ:

Ինչ վերաբերում է կարգապահական վարույթի հարուցման փուլում դատավորի անկախության և հեղինակության ապահովման ընթացակարգային պայմաններին, Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Դատական օրենսգրքի 147-րդ հոդվածի 9-րդ մասի ուժով՝ վարույթ հարուցող մարմինը պարտավոր է ապահովել կարգապահական վարույթի գաղտնիությունը, իսկ նույն օրենսգրքի 153-րդ հոդվածում ամրագրված է Բարձրագույն դատական խորհրդում դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը քննելիս դատավորի իրավունքների և պարտականությունների շրջանակը, հետևաբար՝ առկա են բավարար երաշխիքներ դատավորի անկախության և հեղինակության պաշտպանվածության համար: Ուստի՝ եթե հարուցված կարգապահական վարույթը կարճվում է, ապա դա որևէ ազդեցություն չի թողնում դատավորի պաշտոնեական առաջխաղացման վրա: Ավելին՝ Սահմանադրական դատարանի գնահատմամբ՝ Սահմանադրությամբ և Դատական օրենսգրքով ամրագրված են այն հիմնական երաշխիքները, որոնց շնորհիվ՝ նախադրյալներ են ստեղծված ինչպես արդարադատության պատշաճ իրականացման, այնպես էլ պաշտոնավարման ընթացքում ոչ իրավաչափ ներգործությունից զերծ լինելու համար: Այսինքն՝ Արդարադատության նախարարի կողմից կարգապահական վարույթ հարուցելու լիազորությունը չի կարող ազդել դատավորի անկախության և հեղինակության վրա, քանի որ Արդարադատության նախարարին վերապահված չէ որևէ լիազորություն, որի իրականացումը ներազդում է

կարգապահական վարույթի հետագա ընթացքի վրա՝ կանխորոշելով դրա արդյունքով կայացվելիք՝ դատավորի համար միջամտող որոշումը:

4.3. Սահմանադրական դատարանը հարկ է համարում անդրադառնալ նաև այն հարցին, թե Արդարադատության նախարարի կողմից դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելն արդյո՞ք համատեղելի է Սահմանադրության 63-րդ հոդվածով նախատեսված արդար դատաքննության իրավունքի երաշխիքների հետ:

Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք»:

Դատական օրենսգրքի 90-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝

«Դատավորին և Բարձրագույն դատական խորհրդի անդամին կարգապահական պատասխանատվության ենթարկելու, դատավորի և Բարձրագույն դատական խորհրդի անդամի լիազորությունները դադարեցնելու, ինչպես նաև իր լիազորությունների իրականացման կապակցությամբ դատավորի և Բարձրագույն դատական խորհրդի անդամի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու կամ նրան ազատությունից զրկելու վերաբերյալ համաձայնություն տալու վերաբերյալ հարցերը քննելիս Բարձրագույն դատական խորհուրդը հանդես է գալիս որպես դատարան»:

Քանի որ սույն դիմումի առարկան վերաբերում է դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու փուլին, ստորև կքննարկվի այդ փուլի իրավական ընթացակարգի համապատասխանությունն արդար դատաքննության իրավունքից բխող երաշխիքներին:

Սահմանադրական դատարանը սույն գործին վերաբերելի է համարում արդար դատաքննության իրավունքի համակարգում ընդգրկված, մասնավորապես՝ հետևյալ իրավունքները՝ իր գործով դիրքորոշում հայտնելու, ապացույց ներկայացնելու, ողջամիտ ժամկետում իր գործի քննության և անկախ ու անաչառ դատարանի կողմից գործի արդարացի քննության և պատճառաբանված դատական ակտի իրավունքները:

Սահմանադրական դատարանը հարկ է համարում գնահատել կարգապահական վարույթ հարուցելուց հետո՝ մինչև Բարձրագույն դատական խորհուրդ դիմելու հարցի լուծման ընթացակարգում դատավորի համար նախատեսված արդար դատաքննության

բավարար երաշխիքների առկայությունը: Այսպես՝ Դատական օրենսգրքի 147-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝

«Դատավորը, որի նկատմամբ կարգապահական վարույթ է հարուցվել, իրավունք ունի՝

1) ներկայացնելու գրավոր բացատրություններ, ապացույցներ և անելու միջնորդություններ.

2) վարույթ հարուցող մարմնից ստանալու կարգապահական վարույթի նյութերի պատճենները.

3) սույն մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված իրավունքները իրականացնելու անձամբ կամ փաստաբանի միջոցով»:

Հաշվի առնելով, որ կարգապահական վարույթ հարուցելուց հետո համապատասխան պետական մարմինը կամ պաշտոնատար անձը պետք է գնահատի՝ արդյոք Բարձրագույն դատական խորհուրդ դիմելու իրավական և փաստական հիմքեր առկա են, թե ոչ՝ վերջին դեպքում որոշում կայացնելով վարույթը կարճելու մասին, Սահմանադրական դատարանի գնահատմամբ՝ դատավորին վերապահված ընթացակարգային երաշխիքները բավարար են իրեն կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին միջնորդությունից պաշտպանվելու համար:

Անդրադառնալով գործի ողջամիտ ժամկետում քննության իրավունքին՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու փուլում պահպանված են նաև ողջամիտ ժամկետում քննության անհրաժեշտ երաշխիքները: Մասնավորապես՝ Դատական օրենսգրքի 146-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ «Կարգապահական վարույթ հարուցելու հարցը քննարկվում է այն հարուցելու առիթը վարույթ հարուցող մարմնին հայտնի դառնալու օրվանից մեկ ամսվա ընթացքում, իսկ փորձաքննություն նշանակվելու դեպքում՝ փորձաքննության կատարման համար անհրաժեշտ ժամկետով»:

Դատական օրենսգրքի 147-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Հարուցված կարգապահական վարույթի տևողությունը մինչև կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին միջնորդությամբ Բարձրագույն դատական խորհրդին դիմելը չի կարող վեց շաբաթից ավելի լինել»:

Դատական օրենսգրքի վերաբերելի դրույթներով, մի կողմից՝ անհրաժեշտ ժամկետային սահմանափակում է նախատեսվում Արդարադատության նախարարի և կարգապահական վարույթ հարուցելու լիազորություն ունեցող մյուս մարմինների կողմից դատավորի նկատմամբ վարույթ հարուցելու առիթի օրինականությունն ու առերևույթ հիմքերի առկայությունն ստուգելու համար, իսկ մյուս կողմից՝ հնարավորություն է տրվում դատավորին ներկայացնելու սեփական դիրքորոշումն ու այն հիմնավորող ապացույցները՝ միևնույն ժամանակ կարգապահական վարույթ հարուցելու հարցը և հարուցման պարագայում վարույթի հետագա ընթացքը քննարկելու համար տրամադրելով այնքան ժամանակ, որքան ողջամտորեն բավարար կհամարվի անկողմնակալ քննություն իրականացնելու և դատավորի՝ որպես կարգապահական վարույթի հատուկ սուբյեկտի իրավունքներն ու հեղինակությունը պաշտպանելու համար:

Ինչ վերաբերում է անձի՝ անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի քննության իրավունքին, Սահմանադրական դատարանը դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու ինստիտուտը քննարկելիս նշյալ իրավունքը դիտարկում է դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցող և կարգապահական պատասխանատվության ենթարկող մարմինների տարանջաման համատեքստում, ինչն արդեն իսկ քննարկվել է սույն որոշման 4.2-րդ կետում:

Դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու իրավասություն ունեցող մարմինների կողմից կարգապահական վարույթ հարուցելու գործընթացում կամայականությունների կանխման նպատակով Դատական օրենսգրքով հստակ և սպառիչ սահմանվել են կարգապահական վարույթ հարուցելու հիմքերը և առիթները (Դատական օրենսգրքի 124 և 146-րդ հոդվածներ), որոնք մի կողմից՝ հանդես են գալիս որպես խնդրո առարկա գործընթացը մեկնարկելու անհրաժեշտ իրավական նախադրյալներ, մյուս կողմից՝ իբրև երաշխիքներ այն դատավորի համար, որի նկատմամբ համապատասխան կարգապահական վարույթ է հարուցվել:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետով, 169-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 170-րդ

հողվածով, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 68-րդ հոդվածների պահանջներով՝ Սահմանադրական դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց .

1. «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 145-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը համապատասխանում է Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ



Ա. ԴԻԼԱՆՅԱՆ

17 հունվարի 2024 թվականի
ՍԴՈ-1709